**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*ՀՀ, Լոռու մարզ, ք. Ստեփանավան* 07.11.2024թ.

Սույն թվականի նոյեմբերի 7-ին ժամը 12.00 ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանում՝ ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1 հասցեում, տեղի ունեցավ Ստեփանավան համայնքի աղբահանության իրականացման վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային լսումը (առաջին հանրային լսում):

Ներկա էին համայնքապետարանի աշխատակազմի, «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և համայնքի բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Հրահատ Արրահամյանը: Հ. Արրահամյանը ներկայացավ, ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար: Նա ներկայացրեց հանրային քննարկման առարկան և խոսքը փոխանցեց «Բոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արամ Սարաջյանին:

Ա. Սարաջյանը ներկայացավ, ասաց, որ իրենց կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով իրականացնում է սույն գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքները: Նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի այս գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության:

Այնուհետև ներկայացրեց գործունեության բովանդակությունը, հնարավոր բնապահպանական ռիսկերը և առաջարկվող միջոցառումները: Ասաց, որ բոլոր միջոցառումները կներառվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

Ներկաներից մեկը հարցրեց, թե արդյո՞ք նախատեսվում է իրականացնել նաև աղբի տեսակավորում:

«Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ տնօրեն Արարատ Չերքեզյանը պատասխանեց, որ աղբի տեսակավորում դեռևս չի նախատեսվում, իրականացվելու է միայն աղբի հավաքում և տեղափոխում աղբավայր:

Հ. Արրահամյանն ավելացրեց, որ այս փորձաքննական գործընթացն իրականացվում է համապատասխան լիցենզիա ստանալու համար:

Այնուհետև Ա. Սարաջյանն ասաց, որ դեռևս նախատեսվում է ևս մեկ հանրային լսում, որին ներկա կլինի նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ ներկայացուցիչը, իսկ մինչ այդ կկազմվի ՇՄԱԳ հաշվետվությունը և ամբողջական փաթեթը կներկայացվի ՊՈԱԿ դիտարկմանը: Ավելացրեց, որ 2-րդ հանրային լսման ընթացքում ևս կքննարկվեն բնակչության կողմից հնչած հարցերն ու առաջարկությունները:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Հ. Աբրահամյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Վարող՝
Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Հ. Աբրահամյան

Ձեռնարկող՝
«Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում
և բարեկարգում» ՀՈԱԿ տնօրեն՝ Ս. Զ[illegible]իլյան